ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

N 2275-Ա « 06 » հունիսի 2025թ.

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունվարի 29-ի N 264-Ա որոշմամբ հաստատված N1 հավելվածի 12-րդ կետը՝

1.Հաստատել Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ իրակա-նացվող միջոցառումների շրջանակներում կոմպոզիտորական բաց հրապարակային մրցույթի հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Հաստատել սույն որոշման N1 հավելվածով հաստատված հանձնաժողովի աշխատանքային կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված 1
Երևանի քաղաքապետի
06.06.2025թ.
N 2275-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԲԱՑ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

հ/հ	Անուն, ազգանունը	Պաշտոնը
1	Լևոն Հովհաննիսյան	Երևանի քաղաքապետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
2	Դանիել Դանիելյան (համաձայնությամբ)	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
3	Գոշ Սարգսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ
4	Արամ Սաթյան (համաձայնությամբ)	Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ
5	Աննա Ասատրյան (համաձայնությամբ)	ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն
6	Կարեն Դուրգարյան (համաձայնությամբ)	«Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
7	Նարինե Ոսկանյան (համաձայնությամբ)	«Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի խմբավար
8	Արփինե Լևոնյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության գլխավոր մասնագետի ժ/պ (հանձնաժողովի քարտուղար)

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված 2
Երևանի քաղաքապետի
06.06.2025թ.
N 2275-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն կարգով սահմանվում է Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ իրականացվող միջոցառումների շրջանակներում կոմպոզիտորական բաց հրապարակային մրցույթի գնահատող հանձնաժողովի աշխատանքային կանոնակարգը:
2. Հանձնաժողովի նիստի մեկնարկը տրվում է, եթե նիստին ներկա է ընդհանուր կազմի առնվազն կեսը:
3. Հանձնաժողովի անդամներին նախապես ներկայացվում է գնահատման և արդյունքների ամփոփման ընթացակարգը, տրամադրվում է գնահատման ձևաթուղթը, որտեղ վերջիններն անհրաժեշտ նշումներ են կատարում: Հանձաժողովի անդամները 50-բալանոց սանդղակով (համաձայն Ձև 1-ի) գնահատում են առկա հայտերը՝ ստորագրելով համապատասխան հատվածում: Այնուհետև, ձևաթուղթը փոխանցվում է հանձնաժողովի քարտուղարին:
4. Հանձնաժողովի քարտուղարը համադրում է գնահատականները՝ կազմելով արդյունքների ամփոփում:
5. Քարտուղարն ամփոփելով արդյունքները՝ կազմում է առավելագույն ձայներ ստացած տարբերակների ցանկը, որոնք հերթականապես ներկայացվում են հանձնաժողովի անդամների հաստատմանը: Հայտը ճանաչվում է հաղթող, եթե ստանում է նիստին մասնակից հանձնաժողովի անդամների կեսից ավելիի ձայները և հանձնաժողովի նախագահի վերջնական հաստատումը:

Ձև 1

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ

Հանձնաժողովի անդամ

_____

Հ/հ	«Աբու Լալա Մահարի» իմաստի և բովանդակության փոխանցումը, թարգմանությունը երաժշտական լեզվով (10 հնարավոր)	Կատարված աշխատանքի արհեստավարժությունը (10 հնարավոր)	Ստեղծագործության գեղարվեստական նշանակությունը և արժեքը (10 հնարավոր)	Ստեղծագործության ինքնատիպություն (10 հնարավոր)	Ստեղծագործության մեկնաբանման լայն հնարավորությունը (10 հնարավոր)	Ընդհանուր գնահատական՝ առավելագույնը 50 միավոր
1						
2						
3						
4						
5						
6						
7						
8						

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**